Բարության և ինքնաապահովման *հիմնական* սկզբունքները

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ

Կազմի նկարը. *«Բարի Սամարացու իջևանատուն գալը»*, հեղինակ՝ Պոլ Գուստավ Դոր:

Հրատարակության հեղինակ
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի
Սոլթ Լեյք Սիթի, Յուտա

© 2008 by Intellectual Reserve, Inc.
Բոլոր իրավունքները պաշտպանված են:
Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում

Անգլերենի հաստատումը. 12/08:
Թարգմանության հաստատումը. 12/08:
«*Basic Principles of Welfare and Self-Reliance*»-ի թարգմանությունը
Armenian.
08288 201

Երեց Ռոբերտ Դ. Հեյլզ՝
Տասներկու Առաքյալների քվորումից

Բարօրության տեսլականն ըստ ավետարանի. հավատքը գործի մեջ

Իմ եղբայրներ և քույրեր. ես երախտապարտ եմ հնարավորության համար, որ կարող եմ խոսել ձեզ հետ քահանայության բարօրություն սկզբունքների ավետարանի տեսլականի մասին Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցում:

Տնտեսական ամպերը, որոնք երկար ժամանակ վախեցնում են աշխարհին, այժմ ամբողջությամբ մեր վրա են: Այս փոթորկի ազդեցությունը ավելի քան երբևէ ավետարանի տեսլական է պահանջում մեր Երկնային Հոր զավակներից: Քահանայահիմն բարօրության սկզբունքները վերաբերում են թե՛ նյութականին, թե՛ հոգևորին: Բացի այդ դրանք հավերժական բնույթ ունեն և կիրառելի են բոլոր իրավիճակներում: Հարուստ ենք, թե աղքատ՝ դրանք վերաբերում են մեզ:

Ամեն անգամ, երբ մենք կիրառում ենք բարօրության սկզբունքները, մենք ապրում ենք «մաքուր կրոնասիրությամբ», ինչպես որ սահմանված է սուրբ գրություններում (Հակոբոս Ա.27): Փրկիչն ուսուցանել է. «Որովհետև այս իմ փոքր եղբայրներից մեկին արեցիք, ինձ արեցիք» (Մատթեոս ԻԵ.40): Նա նաև ուսուցանել է, որ մենք ոչ միայն պիտի ջանանք «որբերին ու այրիներին այցելել նրանց նեղության մեջ», այլ նաև մեր «անձն աշխարհից անարատ պահել» (Հակոբոս Ա.27): Այլ կերպ ասած, մենք ոչ միայն *գործում ենք* բարիք. մենք ձգտում ենք *դառնալ* բարին:

Հետևաբար, ըստ ավետարանի՝ սա է բարօրության տեսլականը՝ գործի դնել Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր հավատքը: Հոգու առաջնորդությամբ մենք ծառայում ենք ուրիշներին Ապրելով ավետարանի բարօրության սկզբունքներով, մենք կիրառում ենք Փրկչի ուսմունքներն այստեղ՝ մահկանացու կյանքում:

Ուրեմն, որո՞նք ենք բարօրության այդ սկզբունքները: Ինչպե՞ս կարող ենք դրանք օգտագործել որպես հոգևոր և նյութական կառույցի քարեր մեր ամենօրյա կյանքում:

Հեռատես ապրելակերպ և ինքնաապահովում

Կառույցի առաջին քարը կարելի է նկարագրել որպես հեռատես ապրելակերպ: Սա նշանակում է ուրախ ապրել մեր միջոցների սահմաններում և նախապատրաստվել կյանքի վերելքներին ու վայրեջքներին, որ կարողանանք պատրաստ լինել արտակարգ իրավիճակների անձրևոտ օրերին:

Հեռատես ապրելակերպը նշանակում է չցանկանալ այս աշխարհի բաները: Դա նշանակում է աշխարհիկ միջոցները իմաստուն օգտագործել և վատնող չլինել, նույնիսկ լիության ժամանակ: Հեռատես ապրելակերպը նշանակում է խուսափել չափից ավելի պարտքերից և գոհ լինել մեր ունեցածով:

Մենք ապրում ենք իրավունքների դարաշրջանում: Շատերը մտածում են, որ պետք է ունենան այն, ինչ ուրիշներն ունեն՝ հենց հիմա: Չկարողանալով հետաձգել հաճույքը՝ նրանք պարտքի տակ են ընկնում, որպեսզի գնեն այն, ինչն իրենց ուժերից վեր է: Արդյունքը միշտ ազդում է նրանց և՛ նյութական, և՛ հոգևոր բարօրության վրա:

Երբ մենք պարտքի տակ ենք մտնում, մենք հանձնում ենք մեր արժեքավոր ու անգին կամքի ազատությունը և հայտնվում ենք մեր իսկ ստեղծած գերության տակ: Մենք պարտադրվում ենք տրամադրել մեր ժամանակը, եռանդը և միջոցները, այսինքն՝ այն պաշարները, որոնք կարող էինք օգտագործել մեզ, մեր ընտանիքներին և ուրիշներին օգնելու համար, որպեսզի ետ վճարենք պարտքով վերցրածը:

Երբ պարտքի պատճառով մեր ազատությունը սահմանափակվում է, ավելացող անհուսությունը հյուծում է մեր ֆիզիկականը, ճնշում է մեր հոգեկանը և ծանրացնում մեր հոգևորը: Դա ազդում է մեր մասին մեր կարծիքի վրա, ինչպեսև մեր հարաբերությունների վրա կողակցի ու երեխաների հետ, մեր ընկերների ու հարևանների հետ, և վերջին հաշվով, Տիրոջ հետ:

Այժմ մեր պարտքերը վճարելը և հետագա պարտքերից խուսափելը մեզանից պահանջում է գործի դնել մեր հավատքը Քրկչի հանդեպ՝ ոչ միայն ավելի լավ *գործելու*, այլ նաև ավելի լավը *դառնալու*: Մեծ հավատք է պահանջվում, որպեսզի արտասանենք այս հասարակ խոսքերը. «Մենք հնարավորություն չունենք գնելու այն»: Հավատք է պահանջվում, որ վստահ լինենք, որ կյանքը ավելի լավ կլինի, եթե մենք զոհաբերենք մեր ցանկությունները՝ հանուն մեր և ուրիշների կարիքների ապահովման:

Ես վկայում եմ, որ երջանիկ է այն մարդը, որն ապրում է իր միջոցների սահմաններում և կարողանում է փոքր ինչ տնտեսել հետագա կարիքների համար: Ապրելով հեռատես կյանքով և զարգացնելով մեր պարգևները և շնորհները, մենք դառնում ենք ավելի ինքնաապահով: Ինքնաապահովությունը պատասխանատվություն վերցնելն է՝ հոգալու մեր հոգևոր և նյութական բարօրության մասին, ինչպեսև Երկնային Հոր կողմից մեզ վստահված մարդկանց մասին: Միայն երբ մենք ինքնաապահով ենք, մենք կարող ենք իսկապես նմանվել Փրկչին ուրիշներին ծառայելիս և օրինելիս:

Կարևոր է հասկանանք, որ ինքնաապահովումը միջոց է նպատակի համար: Մեր վերջնանպատակը Փրկչի նման դառնալն է, և այդ նպատակը բարելավվում է ուրիշների մեր անձնուրաց ծառայությամբ: Ինքնաապահովության մեր մակարդակից կախված ծառայելու մեր կարողությունը ավելանում է կամ պակասում:

Ինչպես մի առիթով ասել է Նախագահ Մերիոն Գ. Ռոմնին. «Սովածին ուտելիք տալ չես կարող տալ դատարկ դարակներից: Կարիքավորին գումար չես կարող տալ դատարկ դրամապանակից: Աջակցությունն և ըմբռնումը չի կարող գալ հոգևորապես քաղցածից: Ուսուցումը չի կարող գալ անուսումից: Եվ բոլորից կարևորը՝ հոգևոր առաջնորդությունը չի կարող գալ հոգով թույլից» (in Conference Report, Oct. 1982, 135; կամ *Ensign,* նոյ. 1982, 93):

Տասանորդ և նվիրատվություն վճարելը

Ուրեմն, ինչպե՞ս ենք մենք ստանում Երկնային Հոր օգնությունը, որպեսզի ունենանք բավական մեր կարիքների համար և բավական՝ ուրիշներին ծառայելու համար: Բարօրության հիմնարար սկզբունքներից մեկը տասանորդի և նվիրատվությունների վճարումն է:

Տասանորդի առաջնային նպատակը մեր հավատքը զարգացնելն է: Պահելով «տարեկան [մեր եկամուտի] մեկ տասներորդը» վճարելու պատվիրանը (ՎևՈւ 119.4), մենք դառնում ենք ավելի լավը՝ մեր հավատքն աճում և աջակցում է մեզ կյանքի փորձությունների, ձախորդությունների և վշտի ժամանակ:

Տասանորդ վճարելով մենք սովորում ենք նաև կառավարել մեր ցանկություններն ու ախորժակներն այս աշխարհի բաների համար, ազնիվ լինել մեր մերձավորի հետ և զոհաբերություններ անել ուրիշների համար:

Երբ մեր հավատքն աճում է, աճում է նաև ծոմի նվիրատվություններ վճարելու մեր ցանկությունը: Այդ նվիրատվությունն առնավազն երկու ճաշի արժեքն է, որից մենք հրաժարվում ենք ծոմ պահելիս: Ծոմի նվիրատվությունները մեզ տրված միջոցներն անանուն նվիրելն է՝ օրինելու մեր եղբայրներին և քույրերին հոգևոր և նյութական կարիքներում՝ առանց երկրային շահի կամ օգուտի ակնկալիքների նվիրելը: Ազատ նվիրելը մեզ թույլ է տալիս հետևել Փրկչի օրինակին, որն իր կյանքն ազատ նվիրեց ողջ մարդկությանը: Նա ասել է. «Բոլոր բաներում հիշեք աղքատներին ու կարիքավորներին, հիվանդներին ու տառապյալներին, քանզի ով որ չի անում այս բաները, նա իմ աշակերտը չէ» (ՎևՈւ 52:40):

Որպես Քրիստոսի ճշմարիտ հետևորդներ՝ մենք նույնպես տալիս ենք՝ ինչպես բարի Սամարացին, որը քաջաբար փրկեց ճամփի եզրի իր անծանոթ եղբորը (տես Ղուկաս Ժ.25–37): Ասել է Ջոզեֆ Սմիթը. «Աստծո սիրով լցված մարդը չի ձգտում օրինել միայն իր ընտանիքը, այլ տարածում է այն ողջ աշխարհի վրա՝ ցանկանալով օրինել ողջ մարդկային ցեղը (History of the Church, 4:227):

Ապագային նախապատրաստվելը

Ինչպես խորհուրդ են տվել վերջին օրերի մարգարեները, բարօրության ավենակարևոր քարերից մեկը ապագային նախապատրաստվելն է:

Բյուջե կազմելը

Ապագային նախապատրաստվելը ներառում է մեր եկամուտից ծախսերի և խնայողությունների ծրագիր կազմելը: Զգուշորեն ընտանեկան կամ անձնական բյուջե կազմելը կարող է օգնել մեզ տարբերել մեր պահանջներն ու կարիքները և կառավարել դրանք: Ընտանեկան խորհրդում բյուջեն քննարկելը մեր երեխաներին հնարավորություն կտա ծախսումներ կատարելու սովորություն ձեռք բերել ու կիրառել, ինչպեսև մասնակցել ապագայի ծրագրավորմանը և խնայելուն:

Կրթություն

Ապագային նախապատրաստվելը ներառում է նաև կրթություն կամ մասնագիտություն ձեռք բերելը և եկամտաբեր աշխատանք գտնելը: Եթե ներկայումս աշխատում եք, արեք ամեն բան ձեր ուժերում, որպեսզի գնահատված և էական մասը դառնաք այն կազմակերպության, որտեղ աշխատում եք: Ջանասեր աշխատեք և եղեք «մշակ, [որն] իր վարձքին արժանի է» (Ղուկաս Ժ.7, տես նաև ՎԱՈ 31.5, 70.12, 84.79, 106.3):

Երբ կազմակերպությունները շարունակում են փոքրանալ կամ փակվել, նույնիսկ կատարյալ աշխատողները կարող է նոր աշխատանք գտնելու կարիք ունենան: Սա Տիրոջն ապավինելու՝ աճելու և ամրանալու հնարավորություն է: Եթե դուք նոր աշխատանք եք փնտրում, մեծացրեք ձեր հավատքը Տիրոջ հանդեպ, որ նա ցանկություն և զորություն ունի օրհնելու ձեզ: Նաև խորհուրդ փնտրեք նրանցից, ում դուք վստահում եք, և մի վախեցեք ընկերների օգնությանը դիմել՝ նոր աշխատանք գտնելիս: Անհրաժեշտության դեպքում, փոխեք ձեր կենսաձևը, երբեմն հնարավոր է՝ ձեր բնակարանը, ձեր միջոցների սահմաններում ապրելու համար: Անկախ ձեր տարիքից՝ պատրաստակամորեն լրացուցիչ ուսուցում և նոր հմտություններ փնտրեք: Պահպանեք ձեր առողջությունը և մոտ մնացեք ձեր ամուսնուն և երեխաներին: Եվ ամենից վեր, երախտապարտ եղեք: Աղոթքով արտահայտեք ձեր երախտագիտությունը բոլոր բաների համար, որ տրվել է ձեզ: Երկնային Հայրը սիրում է ձեզ: Նրա որդին խոստացել է. «Այս բոլոր բաները փորձառություն կտան [ձեզ] և կլինեն [ձեր] օգտի համար» (ՎԱՈ 122.7):

Հոգևոր նախապատրաստություն

Իմ եղբայրներ և քույրեր, այժմ է մեր կյանքում բարօրության կառույցի քարեր դնելու և նույն բանը մեր եղբայրներին ու քույրերին ուսուցանելու ժամանակը: Սուրբ գրությունները մեզ ուսուցանում են. «Եթե պատրաստ լինեք, դուք չեք վախենա» (ՎԱՈ 38.30): Պահելով պատվիրանները և ապրելով ըստ բարօրության սկզբունքների՝ մենք կարող ենք Տիրոջ Հոգին միշտ մեզ հետ ունենալ, որը կօգնի մեզ այս վերջին օրերի փոթորիկների ժամանակ և խաղաղություն կխոսի մեր հոգիներին:

Ինչպես որ մենք խնայում ենք մեր նյութական միջոցները անձրևոտ օրերի համար, պատվիրանները պահելը, աղոթելը, սուրբ գրություններ կարդալը և Սուրբ Հոգուն ապավինելը մեզ նախապատրաստում է կյանքի անձրևոտ փորձություններին: Մեր հնազանդությամբ մենք հավատքի պաշար ենք հավաքում կյանքի փոփոխականություններին ու դժվարություններին դիմակայելու համար: Մեզ աշխարհից անբիծ պահելով՝ նման ձևով «լավը» լինելով, մենք կարողանում ենք բարիք գործել աշխարհով մեկ մեր եղբայրների ու քույրերի համար՝ թե՛ նյութապես և թե՛ հոգևորապես:

Ավարտելով՝ թույլ տվեք կիսվել միայն մեկ օրինակով, թե ինչպես ենք մենք դա անում մարդասիրական ծառայության մեջ:

Ամեն տարի Եկեղեցու անդամները ներդրում են անում աղբյուրներ փորելու այնտեղ, որտեղ խմելու ջրի պակաս կա: Մտածեք այդ աղբյուրներից մեկի օգուտի մասին, որը փորվում է հեռավոր մի գյուղում: Մինչ ոմանք կարող են բնութագրել դա որպես զուտ ֆիզիկական օրհնություն, որո՞նք են հոգևոր օրհնություններն այն մոր համար, որը նախկինում ժամերով քայլում էր, որ ջուր հայթայթի և ավելի շատ ժամանակ, որ բերի հասցնի իր երեխաներին: Նախքան աղբյուրի փորելը, ո՞րքան ժամանակ ուներ նա իր երեխաներին ուսուցանելու ավետարանը, աղոթելու նրանց հետ և սնելու նրանց Տիրոջ սիրով: Որքա՞ն ժամանակ ուներ նա անձամբ սուրբ գրություններն ուսումնասիրելու, դրանց վրա խորհելու և ուժ ստանալու՝ իր կյանքի դժվարությունները հաղթահարելու համար: Իրենց հավատքը գործի դնելով՝ Եկեղեցու անդամները օգնել են հագեցնել նրա ընտանիքի ֆիզիկական ծարավը, ինչպեսև նրան հնարավորություն են տվել ազատ խմել կյանքի ջրից և այլևս երբեք չծարավել: Հավատարիմ լինելով բարօրության սկզբունքներով ապրելիս՝ նրանք կարողացել են օգնել փորել «ջրի աղբյուր. . . որ հավիտենական կյանքի համար է բխում» (Հովհաննես Դ.14):

Ես վկայում եմ, որ քահանայության բարօրության սկզբունքներով ապրելը Քրիստոնեական մեր սիրո չափն է: Մեզ սրբազան հնարավորություն է տրված՝ կիրառել Քրիստոսի վերականգնված ավետարանը երկրի վրա՝ գործի դնել մեր հավատքը և վայելել Նրա ուրախության լիությունն այս կյանքում և հանդերձյալ աշխարհում:

Ես տալիս եմ իմ հատուկ վկայությունն այն մասին, որ Փրկիչն ապրում է, և որ Նա տվել է իր կյանքը մեր հավերժական բարօրության համար: Հիսուս Քրիստոսի անունով. ամեն:

Ջուլի Բ. Բեկ՝
Սփոփող Միության գերագույն նախագահ

Սփոփող Միության նախագահի բարոյության պատասխանատվությունները

Սփոփող Միության նպատակը

Իմ թանկագին եղբայրներ և քույրեր. ինձ համար արտոնություն է խոսել ձեզ հետ բարոյության վերաբերյալ ծխի Սփոփող Միության նախագահի պարտականությունների մասին: Իմ ետևում կանանց նկարներ են, ովքեր ծառայել են որպես Սփոփող Միության գերագույն նախագահներ: Նրանց պատմություններն ուսումնասիրելիս ինձ հուշում է եկել, որ այս կազմակերպությունը կատարել է իր աշխատանքը ոչ միայն աճի և բարգավաճման ժամանակ, այլ նաև պատերազմի, սովի, համաճարակի և ճգնաժամի ժամանակ: Անցյալից սովորած դասերը մեզ կարող են օգնել նավարկել մեր օրերում, երբ մենք ապրում ենք բնական աղետներ, պատերազմներ, կառավարական հեղաշրջումներ, անձնական փորձություններ և տնտեսական դժվարություններ: Սփոփող Միությունը նշանակված է *սփոփանք* տրամադրելու, որը նշանակում է՝ բարձրացնել, լուսավորել, մարդուն դժվարությունից հանել:[1] Օգնող կանանց և նրանց ընտանիքների կողմից կյանքի ողջ ընթացքում մեզ հանձնարարվել է միշտ ավելացնել հավատքը և անձնական արդարակեցությունը, ամրացնել ընտանիքներն ու տները և ծառայել Տիրոջն ու Նրա զավակներին: Այսօր մենք կկենտրոնանանք մեր աշխատանքի այն բաժնի վրա, որը վերաբերում է բարօրությանը, մինչ մենք աշխատում ենք եպիսկոպոսի ղեկավարության ներքո՝ կազմակերպելու, ուսուցանելու և ոգեշնչելու քույրերին՝ հոգալու աղքատների ու կարիքավորների մասին և օգնելու նրանց դառնալ ինքնապահով:

Աղքատի և կարիքավորի մասին հոգալը

Սփոփող Միությունը, որը պատասխանատվություն ունի «հոգալ Եկեղեցու բոլոր կին անդամների հոգևոր բարօրության և փրկության մասին»[2] կազմավորվել է, որպեսզի «սփոփի աղքատներին, զրկվածներին, այրիներին ու որբերին և գործի բոլոր բարեգործական ծառայություններում»:[3] Դա ներառում է «աղքատությունից ազատելը, հիվանդությունից ազատելը, կասկածից ազատելը, անգիտությունից ազատելը՝— բոլոր բաներից ազատելը, ինչը խանգարում է կնոջը ուրախություն ունենալ և զարգանալ»:[4]

Ես լսել եմ, թե ինչպես է Նախագահ Մոնսոնը մեծ երախտագիտությամբ խոսել Սփոփող Միության այն նախագահների մասին, որոնք ծառայել են իր հետ, երբ նա երիտասարդ եպիսկոպոս էր: Նա իր Սփոփող Միության նախագահների հետ հետևել է միևնույն օրինակին, որը մենք ունենք այսօր: Նրա ղեկավարության ներքո Սփոփող Միության նախագահը գնում էր անդամների տուն՝ հայտնաբերելու, թե արդյոք անդամներն ունեն բավականաչափ մսունդ, կենցաղային պայմաններ, էմոցիոնալ ուժ կամ այլ անհրաժեշտ միջոցներ: Աղոթքի և իրենց ունեցած հոգևոր պարգևների օգնությամբ նրա Սփոփող Միության նախագահները ոգեշնչում էին փնտրում, որպեսզի պատշաճ ձևով գնահատեն կարիքներն այդ տներում: Ապա, օգտագործելով իրենց միջոցները, նա ի վիճակի էր ինքնապահովման ծրագիր կազմել իր մարդկանց համար:

Ինքնապահովումը և հեռատես ապրելակերպը

Կարիքավորների մասին հոգալու եպիսկոսին օգնելու պարտականությունից բացի, Սփոփող Միության նախագահը ղեկավարում է Սփոփող Միության քույրերին, որ կազմակերպված լինեն, ուսուցանվեն և ոգեշնչվեն անձամբ ինքնապահով դառնալու: Իրենց պատասխանատվությունները հասկանալու համար ղեկավարները կարող են մի քանի կարևոր հարցեր տալ.

1. Ի՞նչ է ինքնապահով լինելը:
2. Ո՞րն է ինքնապահով լինելու հարցում յուրաքանչյուր քրոջ պատասխանատվությունը:

3. Որքա՞ն ինքնաապահով են իմ ծխի քույրերը:
4. Ինչպիսի՞ հմտություններ է հարկավոր ձեռք բերել իմ ծխի քույրերին, որ ինքնաապահով դառնան:
5. Ինչպե՞ս կարող ենք մենք միմյանց օգնել ինքնաապահով դառնալ:

«Ինքնաապահով լինել նշանակում է օգտագործել մեր Երկնային Հոր բոլոր օրհնությունները՝ հոգալու մեր մասին և մեր ընտանիքների մասին և լուծումներ գտնելու մեր սեփական խնդիրների համար»:[5] Մեզանից յուրաքանչյուրը պատասխանատվություն ունի փորձելու խուսափելու խնդիրներից նախքան դրանց տեղի կունենան և սովորելու հաղթահարել դժվարությունները, երբ դրանք վրա կհասնեն:

Մննդի պահուստով կինը. հեղինակ՝ Ջուդիթ Ա. Մեհր

Այս նկարը, որը կախված է իմ գրասենյակում, պատկերում է մի կնոջ մթերանոցում: Այն, ինչ սովորում ենք այս նկարից, միայն մթերանոցների և տնային պահածոյացման մասին դասը չէ: Նայեք կնոջը: Նա կանգնած է մենակ, և մենք չգիտենք, թե արդյոք նա ամուսնացած է, թե մենակ: Նա գոգնոց է կրում, ինչը ենթադրում է, որ նա աշխատանքի մեջ է: Աշխատանքը ինքնաապահովման հիմնարար սկզբունքներից է: Կարող ենք ենթադրել, որ նրա շրջապատի բոլոր պաշարները նրա անձնական ջանքերի արդյունքն է: Նա անձնական պատրաստվածության աշխատանք է կատարել: Նայեք նրա դեմքին: Նա մի փոքր հոգնած, բայց շատ խաղաղ տեսք ունի: Նրա աչքերը ցույց են տալիս նրա հոգու բավարարվածությունը: Նա ինքնաապահով կնոջ տեսք ունի:

Ինչպե՞ս ենք ինքնաապահով դառնում: Մենք ինքնաապահով ենք դառնում, ձեռք բերելով բավականաչափ գիտելիք, կրթություն և գրագիտություն. իմաստուն կառավարելով փողամիջոցները և մյուս պաշարները, հոգևորապես ամուր լինելով, նախապատրաստվելով արտակարգ իրավիճակներին ու պատահականություններին. ինչպեսև ունենալով ֆիզիկական, հասարակական և մտահուզական բարեկեցություն:

Այսպիսով, ինչպիսի՞ հմտություններ են մեզ պետք, որպեսզի ինքնաապահով դառնանք: Իմ տատիկի համար կարևոր էր կարողանալ հավ մորթել ու փետրել: Ես հավ մորթելու ու փետրելու կարիք չեմ ունեցել: Ինչևէ, նույնիսկ Եկեղեցու վաղ օրերում Բրիգամ Յանգը խնդրում էր քույրերին սովորել կանխել հիվանդությունները ընտանիքում, զբաղվել տնային տնտեսությամբ և սովորել հաշվապահություն ու հաշվետարություն և այլ գործնական հմտություններ:[6] Այդ սկզբունքները կիրառելի են նաև այսօր: Կրթությունը շարունակում է կենսականապես կարևոր լինել: Մեզանից յուրաքանչյուրն ուսուցիչ է և ուսանող, ուստի, գրագիտության, տեխնիկական գիտությունների և տրամաբանության հմտությունները ամենօրյա պահանջ են: Ամուսնական և ընտանեկան հարաբերություններում շփման հմտությունների մեծ կարիք կա, իսկ ծնողական հմտությունների կարիքն առավել անհրաժեշտ է, քան երբևէ: Աշխարհում տեսնում ենք նաև պարտքերի և սպառողականության աճի բարձրացում:

Մի քանի եպիսկոպոսների ես հարցրել եմ, թե որն է ամենամեծ կարիքը, որ ունեն ծխի քույրերը, և նրանք պատասխանել են՝ բյուջեով ապրելը: Կանայք պետք է հասկանան ապառիկ գնումներ կատարելու և բյուջեի սահմաններում չապրելու հետևանքները: Երկրորդ հմտությունը, որը նշել են շատ եպիսկոպոսներ, խոհարարությունն էր: Տանը պատրաստած ճաշերը, հիմնականում, ավելի էժան են, ավելի առողջարար և նպաստում են ընտանեկան ամուր հարաբերություններին:

Ես տեսել եմ քույրերի մեծ օրինակներ աշխարհով մեկ, որոնք միմյանց օգնում են ինքնաապահով դառնալ: Միացյալ Նահանգներում քույրերը հավաքվում են, որպեսզի սովորեն, թե ինչպես բյուջետավորեն իրենց ֆինանսները, որպեսզի ավելի զգույշ գնումներ կատարեն և պակասեցնեն պարտքերը: Ավելի տարեց քույրերն ուսուցանում են երիտասարդ կանանց, թե ինչպես ճաշ և առողջարար կերակուրներ պատրաստեն տանը: Գանայում՝ քույրերը միասին կարդալ են սովորում: Պերուում՝ քույրերը բրինձ և լոբի են փաթեթավորում, որպեսզի սոված չմնան երկրաշարժի ժամանակ: Ֆիլիպիններում, որտեղ կանոնավերապես ծովամրրիկներ են լինում, քույրերը մի քանի օրվա օգտագործման պարագաներ և ուտելիք են հավաքում, երբ տեղահանում են իրենց ընտանիքները:

Ընտանեկան աղոթքը. հեղինակ՝ Աբելարդո Լորիա Լովենդինո. Եկեղեցու Պատմության թանգարանի սիրալիր թույլտվությամբ

Երկրորդ նկարը, որը կախված է իմ գրասենյակում, ցույց է տալիս, թե ինչպես կարող է այս սկզբունքը կիրառվել ամենուրեք: Այստեղ մենք տեսնում ենք Ֆիլիպինների մի ընտանիք՝ փայտե հենքերի վրա գետնից բարձր արմավենիների ցցերից պատրաստած իրենց հյուղում նստած: Առջևի մասում երևում է մեծ կժով լիքը ջուր: Նրանք ունեն մի զամբյուղ մանգո, որոշ չափով վառելիք՝ ճաշ պատրաստելու համար, և լույսի հասարակ աղբյուր, որով կարող են տեսնել: Նրանք նստած են ընթրիքի սեղանին՝ աղոթքի համար գլուխները խոնարհած: Պատի վրա կախված է ասեղնագործված բառեր՝ «Ընտանիքները հավերժ են»: Ես կարող եմ պատկերացնել, որ այս ընտանիքի մայրը ինքնասպասարկման շատ սկզբունքներ և հմտություններ է սովորել այստեղ՝ Սփոփող Միության ժողովներում ու միջոցառումներում:

Որքա՞նով են ինքնասպասարկով ձեր ծխի քույրերը: Ինչպե՞ս կարող եք զանազանել նրանց կարիքները: Եվ ով պետք է օգնի Սփոփող Միության նախագահին այս ջանքերում: Քանի որ սա աստվածային աշխատանք է և քանի որ Սփոփող Միության նախագահին աստվածային կոչում ունի, նա աստվածային օգնության արտոնություն ունի: Նա նաև բարի այցելող քույրերի կարիք ունի, որոնք հասկանում են մյուս քույրերի մասին հոգալու և խնամելու իրենց պատասխանատվությունը: Նրանցից և մյուս քույրերից ստացած հաշվետվությունների միջոցով, նա ի վիճակի է սովորելու նրանց կարիքների մասին: Նա կարող է նաև օգտագործել հանձնախմբերի և ավելի երիտասարդ քույրերի կարիքները, որոնք մեծ եռանդ ունեն և պատրաստ են ծառայելու:

Մանկաբարձուհի. Քո շավիղները՝ նրա ընտրած ուղին. հեղինակ՝ Քրիստալ Հոթեր. Եկեղեցու Պատմության թանգարանի սիրալիր թույլտվությամբ

Այս երրորդ նկարը, որը կախված է իմ գրասենյակում, արտացոլում է ռահվիրա մի մանկաբարձի: Այն ինձ հուշում է, որ մեկ շնորհք ունեցող մի քույրը կարող է օրինություն լինել շատերի համար: Դրա օրինակներից մեկը եղել է իմ նախատատը՝ Մերի Էն Համբլինը, որը մանկաբարձուհի էր: Նա օգնել է այս աշխարհ բերելու 2000-ից ավելի մանուկներ: Նա ժամանակի և շնորհների արժեքավոր ներդրում է կատարել Տիրոջ շտեմարանին:

Մեր պատասխանատվությունները կատարելը

Մեր մասին ինչպեսև ուրիշների մասին հոգալը վկայություն է, որ մենք Տեր Հիսուս Քրիստոսի աշակերտներն ենք: Ինչպես ձեզանից շատերին, ինձ ոգեշնչել և ուսուցանել է ինքնասպասարկման սկզբունքները իմ մոր և Սփոփող Միության մյուս քույրերի օրինակը: Այդպիսի կանանցից մեկը իմ քաղցր սկեսուրն էր՝ Ջունը, որը գրեթե 30 տարի շարունակ ծառայում էր Սփոփող Միության նախագահություններում: Երբ նա հանկարծակի մահացավ՝ անցյալ տարի, նա վկայություն թողեց իր ինքնասպասարկով կյանքի մասին: Նա ուներ գործող տաճարային երաշխավորագիր և լավ օգտագործված սուրբ գրություններ և ուսումնասիրման ձեռնարկներ: Մենք սիրով բաժանեցինք կաթսաները, թավաները և ափսեները, որով նա հազարավոր ճաշեր էր պատրաստել: Նա մեզ թողել էր վերմակներ, որոնք

պատրաստել էր հին հագուստից: Նա հավատում էր հին ասացվածքին. «Օգտագործիր, մաշեցրու, բավարարվիր կամ գոյատևիր»: Մենք տեսանք ուտելիքի պաշարը, որը նա աճեցրել էր, պահպանել և պահեստավորել: Մասնավորապես հուզիչ էին նրա հաշվետարական գրքերը, որոնցում նա հավատարմորեն գրանցել էր իր ծախսերը տարիներ շարունակ: Քանի որ նա հեռատես կյանք էր վարում, նա որոշ չափով գումար էր թողել, որը տնտեսել էր արտակարգ իրավիճակների համար, և նա չէր թողել ոչ մի պարտք: Ամենակարևորը, նա ուրիշ շատերի ուսուցանել էր ու ոգեշնչել այն հմտություններով, որոնք ինքը ձեռք էր բերել իր հավատարիմ կյանքում:

Որպես ղեկավարներ՝ մենք մեր հավատքն ենք ցուցաբերում, երբ օգտագործում ենք մեր ժամանակը, շնորհները, ժողովները և միջոցառումները, առաջինը՝ հոգալու այն բաների համար, որոնք կարևոր են նյութական և հոգևոր բարօրության և փրկության համար: Անելով այս բաները՝ մենք կշատացնենք սերը, միաբանությունը, ուրախությունը, քույրությունը և օրհնությունները: Ես վկայում եմ, որ Սփոփող Միության աշխատանքը անբաժանելի մասն է Տիրոջ վերականգնված Եկեղեցու, և որ Նրա աշխատանքն այսօր ղեկավարվում է ապրող մարգարեի կողմից: Հիսուս Քրիստոսի անունով. ամեն:

Հղումներ

1. Տես Online Etymology Dictionary, “relief” և “relieve,” բառերը www.etymonline.com.
2. *Teachings of Presidents of the Church: Joseph F. Smith* (Մելքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության ուսումնական դասընթաց, 1998), 185:
3. *History of the Church,* 4.567:
4. John A. Widtsoe, *Evidences and Reconciliations*, arr. G. Homer Durham (1987), 308:
5. *Instructional Resources for Welfare Trainers,* Lesson 2: Self-Reliance, 3; PDF available online at providentliving.org.
6. Տես Eliza R. Snow, “Female Relief Society,” Deseret News, Apr. 22, 1868, 1; Brigham Young, Deseret News, July 28, 1869, 5:

Եպիսկոպոս Հ. Դեյվիդ Բարտոն
Նախագահող Եպիսկոպոս

Եպիսկոպոսի պատասխանատվությունները բարօրության համար

Կարիքավորներին գտնելը և նրանց մասին հոգալը

Ողջույն, ես Եպիսկոպոս Դեյվիդ Բարտոնն եմ, և այսօր ես արտոնություն ունեմ լինելու Յուտայի Սենտերվիլի հյուսասին ցցի վեց սքանչելի եպիսկոպոսների հետ: Մենք Սոլտ Լեյք Սիթիի բարօրության հրապարակում ենք: Շնորհակալ ենք մեզ միանալու համար, մինչ մենք քննարկում ենք եպիսկոպոսի պատասխանատվությունները գտնելու և հոգալու նրանց մասին, ովքեր բավականաչափ ինքնասպասիով չեն:

Սկսելով՝ ես կցանկանայի երկու մեջբերում անել Նախագահ Ջ. Ռուբեն Կլարկ կրտսերից Նախագահ Կլարկը երկար տարիներ ծառայել է Եկեղեցու Առաջին Նախագահությունում և ակտիվ մասնակից է եղել այն նախաձեռնությունը զարգացնելիս, որն այն ժամանակ կոչվում էր Եկեղեցու Անվտանգության ծրագիր, իսկ այժմ անվանվում է Եկեղեցու բարօրության ծրագիր:

Մի առիթով Նախագահ Ջ. Ռուբեն Կլարկ կրտսերը զանգահարեց մի եպիսկոպոսի՝ նրան տեղեկացնելու, որ մի միայնակ մայր, երեք փոքր երեխաներով, հենց այդ օրը տեղափոխվել է այդ եպիսկոպոսի ծուխը: Նախագահ Կլարկը խնդրեց, որ եպիսկոպոսը որքան հնարավոր է շուտ այցելեր այդ ընտանիքին և տեսներ, թե ինչ օգնության կարիք ունեն:

Նախագահ Կլարկն ասաց եպիսկոպոսին. «Եթե կարողանայի, ես կօգնեի այդ քրոջը, սակայն ես միայն Եկեղեցու Նախագահի առաջին խորհրդական եմ և իշխանություն չունեմ եպիսկոպոսի շտեմարանից պատվեր դուրս գրել: Այդ իրավունքը քոնն է,— ասաց նա,— և այդ արտոնությունը, և դրա համար ես զանգահարում եմ քեզ, խնդրելով, որ անես այն, ինչ հարմար կգտնես անելու այդ ընտանիքի հետ»:

Մեկ այլ առիթով, Նախագահ Կլարկը, զորավոր մի ելույթի ժամանակ ասաց.

«Ըստ Տիրոջ խոսքի՝ Եկեղեցու աղքատի մասին հոգալու բացառիկ լիազորությունը և նրան մասին հոգալիս բացառիկ խորաթափանցությունը գտնվում է եպիսկոպոսի մոտ: . . . Միայն և միայն նրա պարտականությունն է որոշել, թե ում, երբ, ինչպես և ինչ չափով պետք է օգնել իր ճյուղի անդամին Եկեղեցու հիմնադրամներից: . . .

Սա նրա բարձր և հանդիսավոր պարտավորությունն է անձամբ Տիրոջ կողմից տրված: Եպիսկոպոսը չի կարող խույս տալ իր պարտականությունից. նա չի կարող ազատվել դրանից. նա չի կարող դա փոխանցել մեկ ուրիշին և դրանով ազատել իրեն: Ում օգնությանն էլ նա դիմի, միայնույնն է պատասխանատվությունը նրանն է» (վկայակոչվել է Թոմաս Ս. Մոնսոնի կողմից, 1980թ. հոկտեմբերի համաժողովին. կամ տես *Ensign,* նոյ. 1980, էջ 90):

Որո՞նք են եպիսկոպոսի բարօրության հետ կապված պատասխանատվությունները: Դրանք առնավազն երեք մաս ունեն: Այդ թվում են.

1. Ուսուցանել ինքնապահովման հիմնական սկզբունքներն անդամներին և քաջալերել նրանց ինքնապահով դառնալ: Վերջերս թողարկված երկու գրքույկները՝ *«Ամեն ինչ ապահովությամբ հավաքված է. Ընտանեկան ֆինանսներ»* և *«Ամեն ինչ ապահովությամբ հավաքված է. Տան ընտանեկան մթերանոց»* կարող են շատ օգտակար լինել ինքնապահովման կարևորությունը հասկանալիս անդամներին օգնելու հարցում:
2. Օգնել ծխի խորհրդի անդամներին իմանալ և գործել ըստ իրենց պատասխանատվությունների:
3. Օժանդակություն ցույց տալ՝ ըստ բարօրության հիմնական սկզբունքների:

Նոր հրատարակված գրքույկը *«Տիրոջ օրհնակով օգնելը. բարօրության ամփոփ ուղեցույց ղեկավարների համար»* ձեզ կհիշեցնի բարօրության, ինքնապահովման և օժանդակելու սկզբունքների հիմնական նպատակը:

Տիրոջ շտեմարանը

Տերը հայտնել է, որ Եկեղեցու անդամները պետք է [իրենց] ստացվածքից բաժին հանեք աղքատներին. . . և դրանք պիտի դրվեն իմ եկեղեցու եպիսկոպոսի առաջ. . . [և պահվեն] իմ շտեմարանում, աղքատին ու կարիքավորին սատարելու համար (ՎևՈ 42.31—32, 34):

Յուրաքանչյուր եպիսկոպոս ունի տարբեր «գործիքներ» իր առջև դրված, որպեսզի օգնի աղքատին: Այդ գործիքների հավաքածուն մենք անվանում ենք Տիրոջ շտեմարան:

Շտեմարանը ներառում է.

1. Նվիրաբերված կանխիկ գումար, երբ անդամները ստանում են ծոմապահությանը մասնակցելու օրհնությունները:
2. Անդամների կողմից պատրաստված կամ եպիսկոպոսի օգտագործման համար գնված ապրանքներ:
3. Անդամների ժամանակը, շնորհները և միջոցները:

Այդ շնորհները, ինչպես կարող է օգտակար և անհրաժեշտ լինի, կանխիկ գումարի և ապրանքների հետ միասին կազմում են Տիրոջ շտեմարանը: Տիրոջ շտեմարանը մատչելի է յուրաքանչյուր եպիսկոպոսի համար և գոյություն ունի յուրաքանչյուր ծխում: Ի հակադրություն ընդունված իմաստության, Տիրոջ շտեմարանը սահմանափակված չէ շենքով կամ պահեստով, որի ապրանքները սպասում են բաշխման:

Հիմնական սկզբունքներ

Մինչ եպիսկոպոսները իրականացնում են աղքատին փնտրելու և նրա մասին հոգալու իրենց աստվածային լիազորությունը, նրանք հաճախ ստիպված կլինեն դժվար որոշումներ կայացնել: Եպիսկոպոսները օրհնվում են և մեծապես հավակնում են խորաթափանցության պարգևին, երբ հայտնվում են նման իրավիճակում: Յուրաքանչյուր անհատական դեպք, որի հետ գործ ունեք, ոգեշնչման կարիք ունի: Առաջնորդվելով Հոգով՝ միևույն ժամանակ մտապահելով բարօրության հիմնական սկզբունքները, եպիսկոպոսները կարող են լավագույն ձևով որոշել, թե ով է կարիքի մեջ, ինչ չափով և ինչ տեսակի օգնություն է հարկավոր, և որքան ժամանակ է դա անհրաժեշտ:

Հնարավոր է հարցնեք՝ որո՞նք են բարօրություն այն հիմնական, ժամանակով ստուգված սկզբունքները, որոնք կօգնեն եպիսկոպոսին իրենց որոշումների մեջ:

1. Գտեք աղքատներին:

Եպիսկոպոսները պետք է հիշեն, որ իրենք պարտականություն ունեն գտնելու աղքատներին: Բավական

չէ աջակցել միայն, երբ խնդրում են: Եպիսկոպոսը պետք է խրախուսի քահանայության և Սփոփող Միության ղեկավարներին, տնային ուսուցիչներին և այցելող ուսուցիչներին գտնել օգնության կարիք ունեցող անդամներին:

2. Բարձրացրեք անձնական պատասխանատվությունը:

Եպիսկոպոսները պատասխանատվություն ունեն հիշելու, որ անհատներին օգնելիս նրանք պետք է բարձրացնեն անձնական պատասխանատվությունը: Անհատները պատասխանատու են իրենց համար: Երբ անհատները չեն կարողանում հոգալ իրենց մասին, մոտ հարազատները, ինչպեսև ազգականները պարտավորություն և հնարավորություն ունեն օգնելու:

3. Պահպանեք կյանքը, ոչ թե կենսակերպը:

Մենք օգտագործում ենք մի կարճ արտահայտություն՝ «պահպանեք կյանքը, ոչ թե կենսակերպը»: Երբ պահպանում ենք կյանքը, Եկեղեցու օժանդակությունը նախատեսված է ապահովել ուտելիք, հագուստ և պատշաճ ապաստան, ինչպես նաև այլ օժանդակություն, ըստ եպիսկոպոսի որոշման, որն անհրաժեշտ է անհատին օգնելու համար, որ դառնա ինքնապահով: Անհատներից պահանջվում է անձնական միջոցներն օգտագործել իրենց ապահովելու համար և ծախսեր պահանջող գույքը և բնակարանը փոքրացնել՝ բյուջեի սահմանափակումներին հարմարվելու համար:

4. Նախքան գումար տրամադրելը ապրանքներով օգնեք:

Մեկ այլ հիմնարար սկզբունք, որ օգտագործվում է, այն է, որ նախքան կանխիկ գումար օգտագործելը, հիմնականում մենք օգնում ենք ապրանքներով: Հնարավորության դեպքում, եպիսկոպոսը անդամներին ապրանքներ է տրամադրում գումարի կամ նրանց հաշիվները վճարելու փոխարեն: Որտեղ եպիսկոպոսների պահեստներ չկան, ծոմապահության նվիրատվությունները կարելի է օգտագործել անհրաժեշտ ապրանքներ գնելու համար:

5. Տրամադրեք աշխատանք և ծառայություն կատարելու հնարավորություններ:

Բարօրորության ամենակարևոր հիմնարար սկզբունքներից մեկը աշխատանք և ծառայություն կատարելու հնարավորություններ ապահովելն է: Անհատական դժվարությունների ժամանակ, որպեսզի անհատները պահեն իրենց արժանապատվությունը, անհրաժեշտ է օգնությանը հավասար աշխատանքի և ծառայության հնարավորություն տալ օգնություն ստացողին: Աշխատանքի կամ ծառայության արժեքը պարտադիր չէ հավասար լինի ստացած օգնության արժեքին, սակայն բավական պետք է լինի, որ օգնի խուսափել անաշխատ եկամուտի չարիքից և օգնության իրավունք ունեցողի բնավորության զարգացումից: Ծխի խորհուրդը կարող է աջակցել՝ լրացնելով ու պահպանելով իմաստալից աշխատանքի հնարավորությունների ցանկ:

Հարցեր եպիսկոպոսներից

Այս համառոտ նախաբանով, եկեք քննարկենք որոշ հարցեր, որոնք կցանկանայիք բարձրացնել, որոնք վերաբերում են ձեր կարևոր կոչմանը:

Հարց. Գիտակցելով, որ մենք, որպես եպիսկոպոսներ, յուրահատուկ պատասխանատվություններ ունենք բարօրության օգնության համար, կա՞ն արդյոք այլ ծառայողներ, ում կարող ենք դիմել օգնության համար:

Պատասխան. Եպիսկոպոսը հնարավորություն ունի օգտագործելու մի քանիսի օգնությանն իր պարտականությունները կատարելիս: Մասնավորապես, ծխի խորհրդի անդամները, քահանայության քվորումները և Սփոփող Միությունը՝ բոլորը կարող են օգնել եպիսկոպոսին բավարարելու անդամների ժամանակավոր և երկարաժամկետ կարիքները: Այս ղեկավարներին օգնում են տնային ուսուցիչները, այցելող ուսուցիչները և նրանք, ովքեր հատուկ հմտություններ ունեն:

Հարց. Ինչ վերաբերում է բարօրության այս հարցերին, ինչպես կարող եմ ես՝ որպես եպիսկոպոս, ավելի լավ օգտագործել Սփոփող Միությունը և քվորումների ղեկավարներին:

Պատասխան. Սփոփող Միությունը և քվորումի ղեկավարները կարող են չափազանց օգտակար լինել այդ ողջ գործընացի մեջ, և բարօրությունը պետք է կենտրոնական տեղ գրավի քահանայության քվորումի և Սփոփող Միության աշխատանքի մեջ: Այն պետք է կանոնավորապես քննարկվի նախագահության ժողովների ժամանակ: Եպիսկոպոսի ղեկավարության ներքո քահանայության քվորումները և Սփոփող Միությունը պետք է օգնեն անդամներին լուծումներ գտնել և՛ կարճաժամկետ, և՛ երկարաժամկետ բարօրության կարիքների համար և ինքնապահով դառնան:

Սփոփող Միության նախագահը հատուկ տեղ ունի այս ընթացակարգում: Սովորաբար, նա օգնում է

եպիսկոպոսին այցելելով անդամներին, որոնք բարօրության աջակցության կարիք ունեն: Նա օգնում է նրանց գնահատել իրենց կարիքները և հուշում է եպիսկոպոսին, թե ինչպիսի օգնություն պետք է տրամադրել: Եպիսկոպոսը և Սփոփող Միության նախագահը կարող են օգտագործել Կարիքների և միջոցների վերլուծության ձևաթուղթը, որը կօգնի նրանց իրենց կարիքները որոշելիս:

Հարց. Եպիսկոպոս Բարտոն, ինչպե՞ս կառաջարկեիք ուսուցանել ծոմապահության օրենքը, որպեսզի անդամներն ավելի լավ հասկանան այն:

Պատասխան. Ծոմապահության օրենքը Երկնային Հոր զավակների հոգևոր բարօրության հիմքն է: Նա հաստատել է ծոմապահության օրենքը, ինչպեսև տասանորդի օրենքը, որպեսզի օրհնի իր ժողովրդին: Եպիսկոպոսը պետք է ուսուցանի բոլոր անդամներին այս օրենքներով ապրելու կարևորությունը: Նա պետք է նաև ուսուցանի այն օրհնությունների մասին, որոնք Տերը խոստացել է այս օրենքներով ապրողներին: Այդ օրհնությունների թվում են Տիրոջը մոտենալը, աճող հոգևոր ուժը, նյութական բարեկեցությունը, ավելի մեծ կարեկցանքը և ծառայելու ավելի մեծ ցանկությունը:

Աշխարհի որոշ տարածքներում, եպիսկոպոսների պահեստներ են մատչելի մնունդ և հագուստ տրամադրելու համար: Որտեղ եպիսկոպոսների պահեստներ գոյություն չունեն, ծոմի նվիրատվություններն են օգտագործվում մննդով և հագուստով ապահովելու համար: Դրանք օգտագործվում են նաև ապաստանի, բժշկական օգնության և այլ կենսական կարիքներ հոգալու համար:

Այնուամենայնիվ, չկա պահանջ, որ ծոմապահության նվիրատվությունների ծախսերը ծխի կամ ցցի սահմաններում հավասարակշռված լինի ծոմի նվիրատվությունների քանակի հետ:

Հարց. Երկրի տնտեսության ներկա պայմաններում մենք տեսնում ենք մեծ թվով շատ ընտանիքներ և անդամներ, որոնք դժվարանում են վճարել բնակարանային վարկերը: Արդյոք մենք կարո՞ղ ենք օգտագործել ծոմի հիմնադրամները նման վճարումների համար:

Պատասխան. Ինչպես անկասկած հիշում եք, բարօրության աջակցությունը սովորաբար նախատեսված է որպես ժամանակավոր օգնություն: Եպիսկոպոսները, Սփոփող Միության նախագահի հետ միասին, անհրաժեշտության դեպքում նաև այլ մասնագետների հետ, պետք է օգնություն ստացողներին օգնեն ինքնապահով դառնալու ծրագիր մշակել, որպեսզի նրանք այլևս բարօրության աջակցության կարիք չունենան:

Եթե վարկի կարճաժամկետ մարումը հնարավորություն կընձեռնի իրականացնել ինքնապահով դառնալու իրենց ծրագիրը, այդ դեպքում վարկի կարճաժամկետ մարումը կարող է ցանկալի և թույլատրելի լինել:

Հարց. Արդյոք պատշաճ է, որ անհատը, որն օգտվում է պետության անապահովության նպաստներից, օգտվի նաև Եկեղեցու բարօրության օժանդակությունից:

Պատասխան. Անդամները կարող են օգտագործել համայնքային միջոցները, ներառյալ պետական միջոցները, իրենց հիմնական կարիքները հոգալու համար: Եպիսկոպոսը պետք է ծանոթանա այդ միջոցներին: Հաճախակի օգտվող միջոցներից են.

- Հիվանդանոցները, բժիշկները կամ այլ տեսակի բժշկական օգնություն:
- Մասնագիտության ուսուցում համայնքային որոշ աշխատանքի գործակալություններում:
- Հաշմանդամների համար հատկացվող օգնություն:
- Մասնագետ խորհրդատուներ կամ սոցիալական աշխատողներ: Համայնքների շատ մասնագետ խորհրդատուներ կամ սոցիալական աշխատողներ կիսում են մեր արժեքները:
- Վատ հակումների կախվածությունից ազատվելու միջոցներ, որոնք անհամեմատ ավելի շատ մատչելի են, քան նախկինում:

Երբ Եկեղեցու անդամներն օգնություն են ստանում ոչ Եկեղեցական աղբյուրներից, եպիսկոպոսը նույնպես կարող է օգնել Եկեղեցու միջոցներով և օգնել անդամներին խուսափել այդ աղբյուրներից կախված լինելուց: Որտեղ դա հնարավոր է, անդամները պետք է աշխատեն այն օգնության դիմաց, որը նրանք ստանում են: Մենք պետք է խուսափենք անաշխատ եկամուտի չարիքից և զգացողությունից, որ օգնության ստանալու իրավունք ունենք:

Եղբայրներ և քույրեր. մենք հնարավորություն ունեցանք միայն մի քանի րոպե քննարկել կարիքավորներին օգնելուն և օժանդակելուն վերաբերող սրբազան սկզբունքներ: Թող Տերն օրհնի ձեզանից յուրաքանչյուրին, մինչ դուք կատարում եք մեր Երկնային Հոր զավակներին ձեռք մեկնելու ձեր դերը և ցուցաբերում եք ծառայությունից եկող սիրելու ու կարեկցելու կարողությունը: Ես խոնարհաբար աղոթում եմ, որ Տիրոջ օրհնությունները լինեն ձեր վրա, և ասում եմ դա Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու նախագահ

Տիրոջ ուղին

Իմ եղբայրներ և քույրեր. որքան երախտապարտ եմ ես հնարավորության համար՝ խոսելու ձեզ հետ այն թեմայի վերաբերյալ, որը շատ հարազատ է իմ սրտին, այսինքն՝ Եկեղեցու բարօրության ծրագրի վերաբերյալ:

Բարօրության նախագծերում ծառայելը

Սոլթ Լեյք Սիթիի տրորված ճանապարհներից դուրս, ամբոխներից կտրված քաղաքի մի մասում, գտնվում է լավ ճանաչված մի հրապարակ: Այստեղ՝ խաղաղ ձևով, Քրիստոսանման սիրուց դրդված, աշխատողները ծառայում են միմյանց ըստ Վարդապետի աստվածային ծրագրի: Ես խոսում եմ Բարօրության հրապարակի մասին, որը երբեմն հայտնի է որպես եպիսկոպոսի շտեմարան: Եկեղեցու այս կենտրոնական մասում և աշխարհի բազմաթիվ այլ մասերում մրգեր և բանջարեղեններ են պահածոյացվում, և ապրանքներ են դասավորվում, պիտակավորվում, դասավորվում և ուղարկվում կարիքավոր մարդկանց: Այստեղ չկա ոչ պետության օգնության որևէ նշան, ոչ էլ արժույթի փոխանակման կետ, քանի որ այստեղ ընդունվում է միայն կարգված եպիսկոպոսի կողմից ստորագրված պահանջագիրը:

1950–1955 թվականներին ես արտոնություն եմ ունեցել նախագահելու 1080 անդամ ունեցող մի ծխի վրա, որը գտնվում էր Սոլթ Լեյք Սիթիի կենտրոնական մասում: Ծխում կար 84 այրի և, հավանաբար, 40 ընտանիք, որոնք այդ ոչ կայում ժամանակաշրջանում որոշ չափով բարօրության աջակցության կարիք ունեին:

Եկեղեցու միավորներին հատուկ հանձնարարություն էր տրվել, որ կարիքավորների պահանջները բավարարվեն: Եկեղեցու միավորներից մեկում անդամները միս էին արտադրում, մեկ այլ միավորում՝ նարինջ, ևս մեկում բանջարեղեն կամ հացահատիկ, անգամ առաջին անհրաժեշտության խառը ապրանքներ, որպեսզի շտեմարանները լցված լինեն և կարիքավորները բավարարվեն: Տերը ուղի է հաստատել, երբ հայտարարել է. «Եվ շտեմարանը պետք է պահվի եկեղեցու նվիրաբերումների միջոցով. և այրիներն ու որբերը պետք է ապահովվեն, ինչպես նաև աղքատները» (ՎևՈւ 83.6): Ապա հիշեցումը. «Սակայն դա անպայման պետք է արվի իմ իսկ ձևով» (ՎևՈւ 104.16):

Այն տեղի հարևանությամբ, որտեղ ես ապրում էի ու ծառայում, մենք թռչնաբուծական ծրագիր էինք իրագործում: Մեծամասամբ, դա խելամտորեն վարվող ծրագիր էր, որը շտեմարանին տրամադրում էր տասնյակ հազարավոր ձվեր և հարյուրավոր կիլոգրամներով թռչնի միս: Մի քանի դեպքերում, սակայն, ագարակի գործը քաղաքի կամավորների մոտ առաջացնում էր ոչ միայն ձեռքերի կոշտուկներ, այլ նաև սրտի և մտքի հիասթափություն:

Օրինակ, ես միշտ կհիշեմ այն ժամանակը, երբ մենք հավաքել էինք Ահարոնյան Քահանայության պատանիներին, որպեսզի գոմերի տարածքը մաքրենք և գարնանային բուժում ապահովենք: Մեր խանդավառ ու եռանդուն խումբը հավաքվեց ծառայության վայրում և արագ ձևով արմատախիլ արեցինք, հավաքեցինք ու այրեցինք մեծ քանակությամբ մոլախոտ ու աղբ: Բոցավառ խարույկի լույսի տակ մենք հացով նրբերշիկներ կերանք և միմյանց շնորհավորեցինք լավ կատարած աշխատանքի համար: Այժմ գոմերի շրջապատը մաքուր էր և կոկիկ: Սակայն, մենք առաջացրել էին աղետալից մի խնդիր: Աղմուկը և կրակը այնպես էր անհանգստացրել 5000 նուրբ և զգայուն ածան հավերին, որ նրանցից շատերը հանկարծակի փետրաթափ եղան և դադարեցին ձու ածել: Դրանից հետո մենք թույլ էինք տալիս, որ մոլախոտը աճի, որպեսզի ավելի շատ ձու ստանանք:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու ոչ մի անդամ, որը ոլորի պահածո է պատրաստել, ճակնդեղ է մաքրել, խոտ է քաղել, քարածուխ է բարձել կամ ինչ-որ ձևով օգնել է ուրիշներին, երբեք չի մոռանա, ոչ էլ կափսոսա կարիքավորին հատկացրած օգնության փորձառությունը: Նվիրված տղամարդիկ և կանայք օգնում են գործադրել այս մեծ և օգեշնչված բարօրության ծրագիրը: Իրականում, ծրագիրը երբեք չի հաջողվի միայն ջանքերի շնորհիվ, քանի որ այս ծրագիրը գործում է հավատքի միջոցով՝ Տիրոջ ուղուն հետևելով:

Հավատքի շարժառիթով

Մեր ունեցածը ուրիշների հետ կիսելը նորություն չէ մեր սերնդի համար: Մենք միայն պետք է անդրադառնանք Աստվածաշնչի Գ Թագավորաց գրքի պատմությանը, որպեսզի կրկին երախտապարտ լինենք այն սկզբունքի համար, որ երբ հետևում ենք Տիրոջ խորհրդին, երբ հոգում ենք կարիքավորների մասին, արդյունքում շահում են բոլորը: Այնտեղ կարդում ենք, որ խստագույն երաշտը պատել էր երկիրը: Դրան հետևեց սովը: Եղիա մարգարեն Տիրոջից ստացավ իր համար հավանական է զարմանալի հրահանգ. Գնա Սերեփթա . . .. ահա ես այնտեղ մի որբևայրի կնկա հրամայել եմ, որ քեզ կերակրի»: Գտնելով որբևայրուն՝ Եղիան հայտարարեց.

«Խնդրում եմ ինձ համար մի քիչ ջուր բեր մի ամանում, որ խմեմ:

Եվ երբոր նա գնաց բերելու նրան կանչեց և ասաց. Խնդրեմ ինձ համար մի պատառ էլ հաց բեր ձեռքիդ:

Կնոջ պատասխանը նկարագրեց նրա թշվառ վիճակը, որ նա պատրաստում է իր խղճուկ ուտելիքը իր համար և իր որդու համար, որից հետո պետք է սովից մեռնեն:

Որքան անհավանական պետք է նրա համար եղած լիներ Եղիայի պատասխանը.

«Մի վախենա, գնա արա քո խոսքի պես, միայն թե առաջ ինձ համար մի փոքր շոթ շինիր նրանից և բեր ինձ համար, և հետո քեզ և քո որդիի համար կշինես:

Որովհետև այսպես է ասում Իսրայելի Տեր Աստվածը. Սափորումը ալյուրը պիտի չվերջանա և կուժիցը յուղը չպակասե, մինչև այն օրը, որ Տերը անձրև տա երկրի երեսին:

Եվ նա գնաց և արեց Եղիայի խոսքի պես, և նա և կինը և իր տունը կերան բավական ժամանակ:

Եվ սափորիցն ալյուրը չէր վերջանում, և կուժիցը յուղը չէր պակասում» (Գ Թագավորաց ԺԷ.9–11, 13–16):

Սա է այն հավատքը, որը շարժառիթ է եղել և ոգեշնչել է Տիրոջ բարօրության ծրագիրը:

Ճշմարիտ ծոմապահությունը

Յուրաքանչյուր ամսվա մեկ օրը ծոմ պահելով և շռայլորեն ներդրում անելով ծոմապահության հիմնադրամին առնավազն չկերած ճաշերի արժեքի չափով, թող որ մենք հիշենք Եսայիայի խոսքերը, երբ նա նկարագրում է ճշմարիտ ծոմապահությունը.

«Հացդ կտրիր տուր սովածին և թափառական խեղճերին տար տունդ երբոր մի մերկ տեսնես նրան հագցրու, և քեզ պես մարմին ունեցողից քեզ մի ծածկիր:

Այն ժամանակ քո լույսն արշալույսի պես պիտի ծագի, և քո բժշկությունը շուտով պիտի բուսնի, և քո արդարությունը պիտի գնա քո առաջից. Տիրոջ փառքը պիտի [լինի քո վարձքը].

Այն ժամանակ դու կկանչես, և Տերը կպատասխանե. դու կաղաղակես, և նա կասե. Ահա ես. . . .

Եվ Տերը քեզ միշտ կառաջնորդի և կկշտացնի քո անձը երաշտներում. . .. և ջրարբի պարտեզի նման կլինես, և ջրի ակնի պես՝ որի ջուրը չի պակասի (Եսայիա ԾԸ.7–9, 11):

Ծոմապահության մեր սրբազան նվիրատվությունները ֆինանսավորում են շտեմարանների գործածությունը, բավարարում են աղքատի կանխիկ կարիքները և բժշկական խնամք են ապահովում հիվանդների համար, որոնք միջոցներ չունեն:

Իհարկե, շատ տարածքներում ծոմի նվիրատվությունները յուրաքանչյուր ամիս հավաքվում են Ահարոնյան Քահանայության երիտասարդ տղամարդկանց կողմից, սովորաբար, Հանգստության օրվա վաղ առավոտյան: Ես հիշում եմ, որ իմ նախագահած ծխի պատանիները մի առավոտ հավաքված էին, քնկոտ աչքերով, մի քիչ թափթփված, փոքր ինչ դժգոհելով, որ այդքան վաղ արթնացել են իրենց հանձնարարությունը կատարելու: Նրանց հասցեին ոչ մի հանդիմանություն չասվեց, սակայն հաջորդ շաբաթվա ընթացքում մենք տղաներին տարանք Բարօրության հրապարակ՝ ծանոթացնելու այնտեղի աշխատանքին: Նրանք իրենց աչքով տեսան հաշմանդամ մարդու հեռախոսների բաշխիչ ապարատը ղեկավարելիս, տարեց մի մարդու՝ դարակները դասավորելիս, կանանց՝ շորեր դասավորելիս, որոնք պետք է բաժանվեին, նույնիսկ կույր մարդու՝ պահածոների վրա պիտակներ փակցնելիս: Այստեղ մարդիկ էին, որոնք վաստակում էին իրենց գոյամիջոցները իրենց աշխատանքով: Ազդեցիկ լռություն էր պատել տղաներին, երբ նրանք ականատես եղան, թե ինչպես են իրենց ջանքերն ամեն ամիս օգնում հավաքել ծոմի սրբազան նվիրատվությունների հիմնադրամները, որոնք օգնում էին կարիքավորներին և աշխատանք էին ապահովում նրանց, ովքեր աշխատելու ուրիշ հնարավորություն չէին ունենա:

Այդ սրբագործված օրվանից ի վեր այլևս քաջալերանքի կարիք չէր զգացվում: Ծոմի Կիրակիի առավոտները, ժ. 7.00-ին նրանք ներկա էին, Կիրակնօրյա լավագույն հագուստով՝ անհամբեր սպասելով կատարելու Ահարոնյան Քահանայության իրենց պարտականությունը: Նրանք այևս միայն ծրար հավաքողներ ու բաժանողներ չէին: Նրանք օգնում էին մթերքով ապահովելու սովածին և ապաստանով՝ տնանկին,– այդ

ամենում Տիրոջ ձևին հետևելով: Նրանք ավելի հաճախ էին ժպտում, նրանք ավելի եռանդով էին ծառայում: Հավանաբար, այժմ նրանք ավելի լավ էին հասկանում դասական հատվածը. «Որովհետև իմ այս փոքր եղբայրներից մեկի արիք, ինձ արիք» (Մատթեոս ԻԵ.40):

Սիրո հրաշքը

Մեկը կարող է հարցնել նրանց մասին, ովքեր աջակցում են բարօրության ծրագրին՝ Ի՞նչն է նման նվիրաված ության դրդում յուրաքանչյուր աշխատողին: Պատասխանը կարող է հասարակ լինել. Տեր Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին ճշմարտությունը. նույնիսկ սրտաբուխ ցանկությունը սիրել Տիրոջը քո ողջ սրտով, մտքով և հոգով և քո մերձավորին՝ քո անձի պես:

Սա էր շարժառիթը իմ ընկերոջ համար, այժմ մահացած, որը մթերքների արտադրություն ուներ, որն իմ եպիսկոպոս եղած օրերից մի օր ինձ զանգահարեց և ասաց. «Ես մի փոքր բեռնատարով և կցորդով լի ցիտրուսային մրգեր եմ ուղարկում շտեմարան նրանց համար, ովքեր կարիքի մեջ են: Թող շտեմարանի ղեկավարությունը տեղյակ լինի, որ բեռնատարը գալիս է, և ոչ մի վճար չի լինի. միայն, եպիսկոպոս, թող ոչ ոք չիմանա, թե ով է ուղարկել դա»: Ոչ հաճախ է լինում այդքան ուրախություն և երախտագիտություն, որքան եղավ այդ առատաձեռնության արդյունքում: Երբեք չեմ կասկածել, որ այդ անանուն բարերարը, որն այժմ կենդանի չէ, հավերժական վարձք կունենա:

Առատաձեռնության նման բարի արարքներ հաճախ կարելի է գտնել և ոչ հազվադեպ: Սոլթ Լեյք Սիթիին հարող ծանրաբեռնված խճուղիներից մեկի ներքևում ժամանակին մի տնակ կար միայնակ տարեց մի տղամարդու՝ Լուիս անունով, որը հաշմանդամության պատճառով օր չէր լինում, որ ցավ չունենար ոչ էլ շատ օրեր առանց միայնակ մնալու: Մի ձմեռային օր, երբ ես այցելեցի նրան, նա դժվարությամբ էր պատասխանում դռան զանգին: Ես մտա նրա կոկիկ պահված տունը. ջերմաստիճանը, բացառությամբ մի սենյակի՝ խոհանոցի, շատ ցուրտ էր՝ մոտ 5 աստիճան: Պատճառն այն էր, որ նա բավականաչափ գումար չուներ որևէ այլ սենյակ տաքացնելու համար: Պատերը վերանորոգման կարիք ունեին, առաստաղը՝ ցածրացվելու, պահարանները՝ լցվելու:

Ես անհանգստացած էի՝ իմ ընկերոջը այցելելուց: Եպիսկոպոսին տեղեկացվեց և տեղի ունեցած սիրո հրաշք՝ վկայությամբ դրդված: Ծխի անդամները կազմակերպվեցին և սիրո աշխատանքը սկսվեց:

Մեկ ամիս անց իմ ընկեր Լուիսը զնգահարեց և խնդրեց, թե արդյոք կարող եմ նրան այցելել և տեսնել, թե ինչ է պատահել իրեն: Ես այցելեցի և իսկապես հրաշք տեսա: Տուն տանող ճանապարհը տեղափոխվել էր, քանի որ բարդու ծառերի արմատները աճել և խոչընդոտում էին նախկինին, տան սանդղամուտքը վերակառուցվել էր, փայլուն մետաղից նոր դուռ էր տեղադրվել, առաստաղը ցածրացվել էր, պատերը պաստառապատվել էին, փայտե աշխատանքները ներկվել էին, տանիքը փոխվել և պահարանները լցվել էին: Տունն այլևս սառնամանիք չէր և անհրապույր: Այժմ այն կարծես ջերմ ողջույն էր հղում:

Լուին թողել էր վերջում, որպեսզի ցույց տար իր հպարտությունն ու ուրախությունը. նրա մահճակալին իր ընտանեկան տոմի՝ Մակդոնալդների փետրափնջով գեղեցիկ մի ծածկոցաշալ էր գցված: Այն պատրաստվել էր Սփոփող Միության կանանց սիրող հոգատարությամբ: Մինչև հեռանալը ես հայտնաբերեցի, որ երիտասարդ ամուրիներն ամեն շաբաթ տաք ճաշ էին տանում ու ընտանեկան երեկո անցկացնում նրա հետ: Ջերմությունը փոխարինել էր սառնությանը: Վերանորոգումներն անց էին կացրել տարիների հոգնածությունը: Բայց ամենանշանակալից բանն այն էր, որ հույսը վանել էր հուսահատությունը և այժմ սերն էր իշխում հաղթությամբ:

Բոլորը, ովքեր մասնակցել էին իրական կյանքի այս սրտաճմլիկ դրամային, նոր և անձնական երախտագիտություն էին գտել Վարդապետի ուսմունքներից. «Ավելի երանելի է տալը, քան թե առնելը» (Գործք Ի.35):

Բոլոր նրանց, ում հասնում է իմ ձայնը, ես հայտարարում եմ, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի բարօրության ծրագիրը ոգեշնչված է Ամենազոր Աստծո կողմից: Իսկապես, Տեր Հիսուս Քրիստոսն է նրա ճարտարապետը: Նա կանչում է ինձ և ձեզ. «Ահա ես դռան առաջին կանգնած եմ և թակում եմ. եթե մեկը լսե իմ ձայնը և դուռը բանա, կմտնեմ նրա մոտ» (Հայտնություն Գ.20):

Թող որ մենք լսենք նրա ձայնը, թող որ մենք բացենք մեր սրտերի դռները Նրա ներկայության համար, և թող որ նա դառնա մեր հաստատուն ընկերը, մինչ մենք փորձում ենք ծառայել Նրա զավակներին. իմ խոնարհ աղոթքն է Նրա սուրբ անունով, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի, մեր Տիրոջ անունով, ամեն:

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 02082 88201 5
08288 201